



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

«26» « հունիսի » 2020թ. № 264-Ն

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Ավայանի 2020 թվականի հունիսի 8-ի № Ն/04.2/3502 հանձնարարականը չկատարելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) Վարչական դատարանի վարույթում գտնվող ՎԴ/6151/05/19 գործի (ըստ հայցի՝ «Եաս Էներգո սիստեմս» ՍՊԸ-ն ընդդեմ շրջակա միջավայրի նախարարության՝ շրջակա միջավայրի նախարարության վարչական ակտերն անվավեր ճանաչելու /վերացնելու/, որոշակի գործողությունների կատարման՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին) դատական նիստին նախարարության կողմից մասնագիտական մասնակցություն չապահովելու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

- 1) Խաչատուր Խաչատրյան - Իրավաբանական վարչության պետ, խմբի ղեկավար,
- 2) Նաիրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,
- 3) Մերի Բաբայան - Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ,

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանն ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ա. ԱՎԱԼՅԱՆ

6/26/2020

X *Vh. Vh...*

ԱՇՈՏ ԱՎԱԼՅԱՆ

Signed by: AVALYAN ASHOT 3010540299

«26» հունիսի 2020թ.  
ք. Երևան